ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№4513-Ա « 15 » սեպտեմբերի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9-Ի Հ.2418-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 37-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով լ/ա Բելլա Խաչատրյանի 11.09.2026թ. հ.Դ-98372-26 դիմումը.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2021 թվականի հուլիսի 9-ի «Երևանի քաղաքապետի 2020 թվականի օգոստոսի 14-ի հ.2475-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին» հ.2418-Ա որոշման հավելվածի 7-րդ կետը:

3. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

4.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
15.09.2026թ.
հ. 4513-Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	Կարեն Ջավադյան	Նոր Խարբերդի Նալբանդյան փողոց, հ.8	հողամաս	Կարեն Ջավադյանին սեփականության իրավունքով պատկանող, Նոր Խարբերդի Նալբանդյան փողոցի հ.8 հասցեում գտնվող այգետնակին /սեփ. վկ. հ.2728674/ տրամադրել հասցե՝ Նոր Խարբերդի այգեգործական տարածք, 1-ին փողոց, հ.27	01113UCMYVWB	
2	«ԵՐԵՎԱՆԻ ԹԻՎ 53 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՓԲԸ	Դ. Դեմիրճյան փողոց, հ.8, 53	հողամաս	«ԵՐԵՎԱՆԻ ԹԻՎ 53 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, Դ. Դեմիրճյան փողոցի հ.8, 53 հասցեում գտնվող հողամասին /վկ. հ.31072026-01-0416/ տրամադրել հասցե՝ Դ. Դեմիրճյան փողոց, հ.8	01063V2ZJY3K	
3	«ՀԵՍՊԵՌ ՎԵՆՉՈՒՍ» ՍՊԸ	Նորքի 131/9 շենք, հ.31	բնակարան	«ՀԵՍՊԵՌ ՎԵՆՉՈՒՍ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, Նորքի 131/9 շենքի հ.31 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.05062015-01-0250, ընդհ. համ. 9.6քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 68.3քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Նորքի փողոց, հ.131/9 շենք, բն.31/1	01093ASXSTGR	
4	«ՀԵՍՊԵՌ ՎԵՆՉՈՒՍ» ՍՊԸ	Նորքի 131/9 շենք, հ.23	բնակարան	«ՀԵՍՊԵՌ ՎԵՆՉՈՒՍ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, Նորքի 131/9 շենքի հ.23 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.05062015-01-0219, ընդհ. համ. 9.6քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 68.3քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Նորքի փողոց, հ.131/9 շենք, բն.23/1	0109358NRV3A	

5	Նաիրա Գևորգյան	Ա. Պետրոսյան փողոց, հ.26 շենք, հ.27	բնակարան	Նաիրա Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող, Ա. Պետրոսյան փողոցի հ.26 շենքի հ.27 հասցեում գտնվող բնակարանին /վկ. հ.27072026-01-0239/ տրամադրել հասցե՝ Ա. Պետրոսյան փողոց, հ.4 շենք, բն.27	01063MJAAUWR	
6	Հակոբ Աբրահամյան /լիազորված անձ/ Հայկ Աբրահամյան /սեփականատեր/	Հաղթանակ թաղամաս, հ.112	հողամաս	Հայկ Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող, Հաղթանակ թաղամասի հ.112 հասցեում գտնվող հողամասին /հիմք՝ Երևանի քաղաքապետի 07.09.2026թ. հ.4375-Ա որոշում և վկ. հ.23122025-01-0092/ տրամադրել հասցե՝ Հաղթանակ թաղամաս, 2-րդ փողոց, 20-րդ նրբանցք, հ.5/4	01073DSQ557J	
7	Բելլա Խաչատրյան /լիազորված անձ/ «ՖԱՈՒՆԴԵՐ» ՍՊԸ	Ծիծեռնակաբերդի խճուղի, հ.13	հողամաս	Ծիծեռնակաբերդի խճուղու հ.13 հասցեում գտնվող հողամասի /վկ. հ. 14032026-01-0011 և վկ. հ. 02042026-01-0094/ բաժանման հատակագծով առանձնացվող 8980.6քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Ծիծեռնակաբերդի խճուղի, հ.15	01073TPK3SPX	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**